ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20-21-20
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

12 Մարտի 2021թ. ք. Երևան

Նախագահությամբ՝ Կ.Հովհաննիսյանի
անդամներ՝ Ռ. Սինոյան
Հ. Ռշտունի
Ա. Ալաբերքյան
Տ. Իսրաելյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 01/03/21թ. «Շիրակ»-«Փյունիկ» (ԲԽ080) խաղի մասին.

1.1. «Փյունիկ» թիմի խաղացողները դուրս են եկել հանդերձարանից 3 րոպե ուշացումով:

1.2. «Փյունիկ»թիմի ֆուտբոլիստների մարզահագուստի վերջին ստուգման ժամանակ մրցավարները նկատեցին, որ նրանց դարպասապահը կրում է վարտիքի գույնի հետ չհամընկնող տրիկո: Մրցավարների պահանջով վերջինս վերադարձավ հանդերձարան և մարզահագուստը բերեց պատշաճ տեսքի: Նշված խախտումների պատճառով հանդիպումը սկսել է 4 (չորս) րոպե ուշացումով՝ 14:04-ին:

2. 08/03/21թ. «Նոա»-«Լոռի ՖԱ» (ԲԽ038) խաղին՝ «Լոռի ՖԱ» թիմի ֆուտբոլիստ Կլաուդիր Մարինի Ջունիորի (N 28765) հեռացման մասին. (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար).

3. 04/03/21թ. «Լոռի ՖԱ»-«Նոա» (ԲԽ083) խաղի մասին.

3.1. Դաշտի տեր ակումբի VIP օթյակը գտնվում է 2 թիմերի պահեստայինների նստարանի արանքում, որը շատ մոտ է մրցավարներին, ինչը և խաղի ժամանակ խանգարում է վերջիններիս աշխատանքին: Այդպիսի դեպք արձանագրվեց խաղի 2-րդ խաղակեսի ժամանակ, երբ դաշտի տեր ակումբի նախագահ Ռոբերտ Գրիգորյանը միջամտում էր մրցավարի գործողություններին, ինչի արդյունքում խաղի ժամանակ վիճաբանություն տեղի ունեցավ գլխավոր մրցավարի հետ:

3.2. Խաղի ավարտից հետո չի կայացել նախապես նշված ֆլեշ հարցազրույցը VBET-ի հետ, որը պետք է հեռարձակվեր ուղիղ եթերով, և որի համար բոլոր ակումբները ստացել էին շրջաբերական նամակներ ՀՖՖ-ից, ինչպես նաև խաղից առաջ այդ մասին տեղեկացվել էին դաշտի տեր թիմի ներկայացուցիչները: Վերջիններիս պնդմամբ, ֆլեշ հարցազրույցը չի կայացել խաղից հետո մարզչի հետ «խառը» իրավիճակով պայմանավորված:

4. 04/03/21թ. «Լոռի ՖԱ»-«Նոա» (ԲԽ083) խաղի մասին. «Նոա» թիմի ֆուտբոլիստ Վիմերկատիի համազգեստի խախտումը շտկելու պատճառով, խաղը սկսվեց 2 րոպե ուշացումով:

5. 08/03/21թ. «Նոա»-«Լոռի ՖԱ» (ԲԽ038) խաղի մասին.

5.1. Նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության ներկայացուցիչ չի եղել, խաղին եղել են 3 ոստիկան և 7 անվտանգության աշխատակից:

5.2.VIP օթյակում գտնվողներից ոչ ոք հավատարմագիր /badge/ չի կրել, ցանկացած մարդ կարող էր ելումուտ անել, ինչի վրա պատվիրակը խնդրել է ուշադրություն դարձնել դաշտի տեր ակումբի անվտ. պատասխանատու Լ. Սիմոնյանին:

6. 28/02/21թ. «Ալաշկերտ»-«Լոռի ՖԱ» (ԲԽ079) խաղի մասին.

Չի կազմակերպվել հետխաղային մամուլի ասուլիս:

7. 01/03/21թ. «Արարատ»-«Վան» (ԲԽ077) խաղի մասին.

Չի կազմակերպվել հետխաղային մամուլի ասուլիս:

8. 07/03/21թ. «Արարատ-1-03»-«Լոռի ՖԱ-04» (18B007) խաղին՝ «Լոռի ՖԱ-04» թիմի ֆուտբոլիստ Հայկ Եսայանի (N 28850) հեռացման մասին (մրցավարի հասցեին վիրավորական արտահայտության համար).

9. 07/03/21թ. «Արարատ-1-03»-«Լոռի ՖԱ-04» (18B007) խաղին՝ «Արարատ-1-03» թիմի ֆուտբոլիստ Սնակ Մանուկյանի (N 30486) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար).

10. «Վանաձորի ֆուտբոլի ակադեմիա ՀԿ» ակումբի մասին.

Վանաձորի Ֆուտբոլի ակադեմիա ՀԿ-ը պարբերաբար աղավաղել է կամ ընդհանրապես չի օգտագործել VBET Հայաստանի պրեմիեր լիգայի և VBET Հայաստանի գավաթի խաղարկությունների պաշտոնական անունները (օրինակները պահված են):

Հարց. 1

ՈՐՈՇՈՒՄ.

1. 01/03/21թ. «Շիրակ»-«Փյունիկ» (ԲԽ080) խաղին.

«Փյունիկ» թիմի խաղացողները հանդերձարանից 3 րոպե ուշացումով դուրս գալու, խախտումների պատճառով հանդիպումը 4 րոպե ուշացումով սկսելու համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 43-րդ կետի համաձայն «Փյունիկ» ՖԱ ՀԿ-ին տուգանել 15000 ՀՀ դրամի չափով:

Հարց. 2

ՈՐՈՇՈՒՄ.

2. 08/03/21թ. «Նոա»-«Լոռի ՖԱ» (ԲԽ038) խաղին՝ «Լոռի ՖԱ» թիմի ֆուտբոլիստ Կլաուդիր Մարինի Ջունիորի (N 28765) հեռացման (նույն խաղում 2 զգուշացում ստանալու) համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 34-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Կլաուդիր Մարինի Ջունիորին որակազրկել 1 խաղով, «Վանաձորի ֆուտբոլի ակադեմիա ՀԿ»-ին տուգանել 25000 ՀՀ դրամի չափով:

Հարց. 3

ՈՐՈՇՈՒՄ.

3. 04/03/21թ. «Լոռի ՖԱ»-«Նոա» (ԲԽ083) խաղին.

Դաշտի տեր ակումբի VIP օթյակից խաղի ժամանակ մրցավարների աշխատանքը խանգարելու, խաղավարտից հետո VBET հարցազրույց չկայանալու համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 37-րդ և 45-րդ կետերի համաձայն՝ «Վանաձորի ֆուտբոլի ակադեմիա ՀԿ»-ին հայտարարել նկատողություն և տուգանել 10000 ՀՀ դրամի չափով։

Հարց. 4

ՈՐՈՇՈՒՄ.

4. 04/03/21թ. «Լոռի ՖԱ»-«Նոա» (ԲԽ083) խաղին.

Խաղը 2 բոպե ուշացումով սկսելու համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 43-րդ կետի համաձայն՝ «Նոա» ՖԱ ՀԿ-ին տուգանել 15000 ՀՀ դրամի չափով։

Հարց. 5

ՈՐՈՇՈՒՄ.

5. 08/03/21թ. «Նոա»-«Լոռի ՖԱ» (ԲԽ038) խաղին՝ նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության ներկայացուցիչ չլինելու, VIP օթյակում գտնվողներից ոչ ոք հավաստարմագիր (badge) չկրելու, ցանկացած մարդ VIP օթյակ ելումուտ անելու համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 41-րդ և 45-րդ կետերի համաձայն՝ «Նոա» ՖԱ ՀԿ-ին տուգանել 20000 ՀՀ դրամի չափով։

Հարց. 6

ՈՐՈՇՈՒՄ.

6. 28/02/21թ. «Ալաշկերտ»-«Լոռի ՖԱ» (ԲԽ079) խաղին՝ հետխաղային մամուլի ասուլիս չկազմակերպելու համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 45-րդ կետի համաձայն՝ «Ալաշկերտ» ՖԱ-ին տուգանել 10000 ՀՀ դրամի չափով։

Հարց. 7

ՈՐՈՇՈՒՄ.

7. 01/03/21թ. «Արարատ»-«Վան» (ԲԽ077) խաղին՝ հետխաղային մամուլի ասուլիս չկազմակերպելու համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 45-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ՖԱ-ին տուգանել 10000 ՀՀ դրամի չափով։

Հարց. 8

ՈՐՈՇՈՒՄ.

8. 07/03/21թ. «Արարատ-1-03»-«Լոռի ՖԱ-04» (18B007) խաղին՝ «Լոռի ՖԱ-04» թիմի ֆուտբոլիստ Հայկ Եսայանի (N 28850) հեռացման (մրցավարի հասցեին վիրավորական արտահայտություն անելու) համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 37-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Հայկ Եսայանին որակազրկել 2 խաղով, «Վանաձորի ֆուտբոլի ակադեմիա ՀԿ»-ին տուգանել 5000 ՀՀ դրամի չափով:

Հարց. 9

ՈՐՈՇՈՒՄ.

9. 07/03/21թ. «Արարատ-1-03»-«Լոռի ՖԱ-04» (18B007) խաղին «Արարատ-1-03» թիմի ֆուտբոլիստ Սևակ Մանուկյանի (N 30486) հեռացման (նույն խաղում 2 զգուշացում ստանալու) համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 37-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ՖԱ-ին տուգանել 3000 ՀՀ դրամի չափով:

Հարց. 10

ՈՐՈՇՈՒՄ.

10. «Վանաձորի ֆուտբոլի ակադեմիա ՀԿ»-ը VBET Հայաստանի պրեմեր լիգայի և VBET Հայաստանի գավաթի խաղարկությունների պաշտոնական անունները պարբերաբար աղավաղելու կամ ընդհանրապես չօգտագործելու համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 66-րդ կետի համաձայն՝ «Վանաձորի ֆուտբոլի ակադեմիա ՀԿ»-ին հայտարարել նկատողություն և տուգանել 50000 ՀՀ դրամի չափով:

ՆԱԽԱԳԱՀ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ՌՇՏՈՒՆԻ

Հիշեցում՝

1. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի Հոդված 12-ի համաձայն՝ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման կարգ.

Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումները Ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել Բողոքարկման Կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում: